



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հունվարին /վերլուծություն/

2005թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 6090 գործարքներ, որոնց քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 36.7%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ աճել՝ 5.8%-ով:

2005թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2496 օտարման գործարքների 91.6%-ը կազմել են առուվաճառքները, 8.1%-ը՝ նվիրատվությունները և 0.3 %-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.5%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 38.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հունվարին, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 40.1%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 3.6%-ով: 2005թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 37.5%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 13.0%-ով:

2005թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/ԱՄՆ դոլարը 2005թ. հունվարին համարժեք է 491.7դրամ/

| Համայնքներ                          | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվարին /ԱՄՆ դոլար/ | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/ |                |                  |
|-------------------------------------|--|---|----------------|------------------|
|                                     |  | հունվար 2004թ.  | հունվար 2005թ. | դեկտեմբեր 2004թ. |
| Կենտրոն                             | 350.0-970.0  | 423.2   | 519.5          | 507.7            |
| Արաբկիր                             | 250.0-560.0  | 317.2   | 414.8          | 407.9            |
| Քանաքեռ-Զեյթուն                     | 130.0-330.0  | 198.2   | 256.8          | 249.8            |
| Նոր-Նորք                            | 115.0-250.0  | 159.3   | 228.7          | 222.5            |
| Ավան                                | 120.0-230.0  | 157.4   | 220.5          | 210.5            |
| Էրեբունի                            | 120.0-300.0  | 168.5   | 204.1          | 199.4            |
| Շենգավիթ                            | 120.0-270.0  | 169.2   | 247.5          | 240.5            |
| Դավթաշեն                            | 130.0-320.0  | 201.1   | 258.7          | 254.5            |
| Աջափնյակ                            | 120.0-300.0  | 179.8   | 243.1          | 234.8            |
| Մալաթիա-Սեբաստիա                    | 120.0-270.0  | 166.2   | 237.0          | 230.8            |
| Նուբարաշեն                          | 75.0-120.0   | 71.0  | 99.7           | 95.5             |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | 75.0-970.0   | 201.0   | 266.4          | 259.4            |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունվարին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.7%:

2005թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 314 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 31.0 %-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 19.1 %-ով:

2005թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

| Մարզեր | Քաղաքներ | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվարին /ԱՄՆ դոլար/ | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/ |                |                  |
|--------|----------|--|---|----------------|------------------|
|        |          |  | հունվար 2004թ.  | հունվար 2005թ. | դեկտեմբեր 2004թ. |

|             |             |            |      |       |       |
|-------------|-------------|------------|------|-------|-------|
| Արագածոտն   | Աշտարակ     | 40.0-95.0  | 63.0 | 76.2  | 73.7  |
|             | Ապարան      | 20.0-50.0  | 27.4 | 39.2  | 39.2  |
|             | Թալին       | 20.0-50.0  | 25.2 | 32.8  | 32.5  |
| Արարատ      | Արտաշատ     | 40.0-88.0  | 54.8 | 63.7  | 60.7  |
|             | Մասիս       | 40.0-90.0  | 54.5 | 66.2  | 64.2  |
|             | Վեդի        | 30.0-60.0  | 31.7 | 42.9  | 42.9  |
|             | Արարատ      | 30.0-60.0  | 31.6 | 43.7  | 43.5  |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 50.0-130.0 | 84.9 | 114.5 | 111.5 |
|             | Արմավիր     | 40.0-80.0  | 45.8 | 72.1  | 68.1  |
|             | Մեծամոր     | 20.0-50.0  | 30.9 | 33.2  | 32.9  |
| Գեղարքունիք | Սևան        | 20.0-55.0  | 30.7 | 37.6  | 37.0  |
|             | Գավառ       | 20.0-50.0  | 30.5 | 34.2  | 34.1  |
|             | Մարտունի    | 20.0-60.0  | 29.7 | 36.6  | 36.6  |
|             | Վարդենիս    | 10.0-35.0  | 17.3 | 17.7  | 17.6  |
|             | Ճամբարակ    | 13.0-30.0  | 17.5 | 18.1  | 18.1  |
| Լոռի        | Վանաձոր     | 30.0-90.0  | 62.1 | 67.5  | 67.1  |
|             | Ստեփանավան  | 20.0-55.0  | 33.4 | 37.0  | 37.0  |
|             | Մայիտակ     | 30.0-70.0  | 24.1 | 47.5  | 47.5  |
|             | Ալավերդի    | 15.0-40.0  | 25.6 | 26.5  | 26.5  |
|             | Տաշիր       | 15.0-45.0  | 19.4 | 25.5  | 25.5  |
| Կոտայք      | Արովյան     | 45.0-150.0 | 84.4 | 116.5 | 112.5 |
|             | Նոր Հաճն    | 50.0-110.0 | 52.3 | 81.7  | 81.7  |
|             | Բյուրեղական | 30.0-90.0  | 35.2 | 50.7  | 50.6  |
|             | Եղվարդ      | 35.0-80.0  | 40.7 | 59.4  | 57.8  |
|             | Հրազդան     | 30.0-85.0  | 31.1 | 51.5  | 50.5  |
|             | Ծաղկաձոր    | 40.0-130.0 | 75.8 | 93.6  | 93.5  |
|             | Չարենցավան  | 30.0-85.0  | 31.1 | 45.8  | 45.8  |
| Շիրակ       | Գյումրի     | 40.0-120.0 | 72.1 | 78.7  | 78.6  |
|             | Արթիկ       | 20.0-45.0  | 25.3 | 31.6  | 31.5  |
|             | Մարալիկ     | 18.0-45.0  | 23.7 | 28.4  | 28.4  |
| Սյունիք     | Գորիս       | 25.0-70.0  | 29.7 | 42.7  | 41.7  |
|             | Կապան       | 20.0-60.0  | 29.5 | 34.9  | 34.9  |
|             | Սիսիան      | 20.0-60.0  | 27.6 | 38.8  | 37.8  |
|             | Մեղրի       | 18.0-58.0  | 25.2 | 26.1  | 26.1  |
|             | Ագարակ      | 18.0-50.0  | 24.9 | 25.2  | 25.2  |
|             | Քաջարան     | 13.0-40.0  | 18.5 | 19.9  | 19.9  |
| Վայոց Ձոր   | Վայք        | 30.0-70.0  | 35.4 | 43.7  | 43.7  |
|             | Եղեգնաձոր   | 40.0-90.0  | 46.9 | 58.8  | 57.8  |
|             | Ջերմուկ     | 40.0-100.0 | 41.2 | 64.8  | 63.8  |
| Տավուշ      | Դիլիջան     | 30.0-70.0  | 36.2 | 47.1  | 47.1  |
|             | Իջևան       | 40.0-90.0  | 40.4 | 59.5  | 59.5  |
|             | Բերդ        | 25.0-60.0  | 29.3 | 37.4  | 37.4  |
|             | Նոյեմբերյան | 15.0-45.0  | 26.8 | 27.7  | 27.7  |

2005թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.3%:

2005թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 299 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 81, մյուս մարզերում միասին վերցրած՝ 218: 2004թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 32.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 12.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 37.2%-ով: 2004թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակն նվազել է 16.2%-ով, ընդ որում Երևանում աճել է 12.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 23.5%-ով:

2005թ. հունվարին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

| Համայնք                           | Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. հունվարին /ԱՄՆ դոլար/ | Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/ |                |                  |
|-----------------------------------|---|--|----------------|------------------|
|                                   |   | հունվար 2004թ.   | հունվար 2005թ. | դեկտեմբեր 2004թ. |
| Կենտրոն                           | 255.0-1000.0  | 437.4  | 521.1          | 510.0            |
| Արաբկիր                           | 205.0-900.0   | 318.7  | 416.2          | 410.1            |
| Քանաքեռ-Զեյթուն                   | 140.0-360.0   | 200.1  | 257.9          | 251.4            |
| Նորք-Մարաշ                        | 120.0-550.0   | 317.4  | 352.9          | 350.4            |
| Ավան                              | 125.0-280.0   | 159.6  | 221.7          | 211.8            |
| Էրեբունի                          | 130.0-320.0   | 169.8  | 205.1          | 201.6            |
| Շենգավիթ                          | 120.0-350.0   | 170.1  | 248.2          | 242.5            |
| Դավթաշեն                          | 140.0-700.0   | 198.0  | 260.0          | 255.7            |
| Աջափնյակ                          | 125.0-320.0   | 180.0  | 243.8          | 236.3            |
| Մալաթիա-Սեբաստիա                  | 125.0-300.0   | 167.7  | 238.0          | 233.6            |
| Նուբարաշեն                        | 65.0-150.0  | 73.9   | 101.6          | 98.4             |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | <b>65.0-1000.0</b>  | <b>217.5</b>   | <b>278.8</b>   | <b>272.9</b>     |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 2.2%:

2005թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

| Մարզեր    | Քաղաքներ   | Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. հունվարին /ԱՄՆ դոլար/ | Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/ |                |                  |
|-----------|------------|---|---|----------------|------------------|
|           |            |   | հունվար 2004թ.  | հունվար 2005թ. | դեկտեմբեր 2004թ. |
| Արագածոտն | Աշտարակ    | 60.0-110.0  | 83.1  | 87.7           | 87.4             |
|           | Ապարան     | 25.0-60.0   | 38.8  | 40.5           | 39.6             |
|           | Թալին      | 20.0-65.0   | 28.1  | 35.2           | 35.2             |
| Արարատ    | Արտաշատ    | 50.0-90.0   | 61.9  | 64.8           | 62.4             |
|           | Մասիս      | 50.0-90.0   | 62.6  | 67.5           | 65.7             |
|           | Վեդի       | 25.0-70.0   | 36.3  | 49.4           | 49.4             |
|           | Արարատ     | 20.0-65.0   | 37.5  | 46.3           | 46.3             |
| Արմավիր   | Վաղարշապատ | 80.0-130.0  | 89.9  | 115.9          | 114.5            |

|             |             |            |      |       |       |
|-------------|-------------|------------|------|-------|-------|
|             | Արմավիր     | 35.0-90.0  | 52.5 | 73.9  | 71.2  |
| Գեղարքունիք | Սևան        | 20.0-60.0  | 36.4 | 42.3  | 42.3  |
|             | Գավառ       | 20.0-60.0  | 39.9 | 39.9  | 39.9  |
|             | Մարտունի    | 20.0-60.0  | 33.9 | 41.1  | 41.1  |
|             | Վարդենիս    | 15.0-50.0  | 21.3 | 21.9  | 21.9  |
|             | Ճամբարակ    | 15.0-50.0  | 19.8 | 22.4  | 22.4  |
| Լոռի        | Վանաձոր     | 50.0-90.0  | 69.1 | 71.1  | 71.0  |
|             | Ստեփանավան  | 15.0-60.0  | 33.7 | 50.4  | 50.3  |
|             | Սպիտակ      | 20.0-60.0  | 24.1 | 50.2  | 50.2  |
|             | Ալավերդի    | 15.0-50.0  | 25.9 | 30.0  | 30.0  |
|             | Տաշիր       | 15.0-55.0  | 19.9 | 28.5  | 28.5  |
| Կոտայք      | Արուսյան    | 70.0-130.0 | 92.7 | 119.2 | 118.1 |
|             | Նոր Հաճն    | 40.0-90.0  | 54.2 | 85.9  | 85.3  |
|             | Բյուրեղավան | 25.0-70.0  | 38.2 | 51.9  | 51.6  |
|             | Եղվարդ      | 40.0-80.0  | 47.3 | 60.7  | 59.9  |
|             | Հրազդան     | 25.0-65.0  | 40.3 | 55.7  | 53.0  |
|             | Ծաղկաձոր    | 70.0-120.0 | 85.4 | 102.0 | 100.7 |
|             | Չարենցավան  | 25.0-65.0  | 33.4 | 48.5  | 47.4  |
| Շիրակ       | Գյումրի     | 60.0-120.0 | 91.1 | 92.3  | 92.2  |
|             | Արթիկ       | 20.0-55.0  | 28.7 | 33.5  | 33.5  |
|             | Սարալիկ     | 15.0-50.0  | 23.9 | 29.7  | 29.7  |
| Սյունիք     | Գորիս       | 20.0-60.0  | 31.7 | 44.2  | 44.2  |
|             | Կապան       | 20.0-60.0  | 31.1 | 36.7  | 36.6  |
|             | Սիսիան      | 20.0-60.0  | 28.7 | 40.7  | 40.3  |
|             | Մեղրի       | 15.0-50.0  | 28.2 | 28.7  | 28.7  |
|             | Ագարակ      | 15.0-50.0  | 27.1 | 28.3  | 28.3  |
| Վայոց Ձոր   | Վայք        | 20.0-60.0  | 37.0 | 47.0  | 47.0  |
|             | Եղեգնաձոր   | 35.0-80.0  | 49.3 | 60.5  | 58.7  |
|             | Ջերմուկ     | 25.0-65.0  | 43.4 | 44.4  | 44.3  |
| Տավուշ      | Դիլիջան     | 20.0-70.0  | 39.2 | 58.2  | 58.2  |
|             | Իջևան       | 35.0-80.0  | 41.2 | 61.2  | 60.7  |
|             | Բերդ        | 20.0-60.0  | 30.9 | 38.7  | 38.4  |
|             | Նոյեմբերյան | 20.0-60.0  | 30.8 | 31.1  | 31.1  |

2005թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսական աճը կազմել է 1.0%:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 3237.32 հա /այդ թվում՝ 7.32 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 3209.85 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 3230.61 հա հողերի /այդ թվում՝ 7.26 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 3204.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել է նաև 1 միավոր /0,40 հա/ արդյունաբերական օբյեկտների հող:

Օտարված 6.61 հա /այդ թվում՝ 0.05 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 5.75 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Փոխանակման միջոցով օտարվել են 0.10 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 0.01 հա Երևանում/, որից 0.08 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2870.67 հա, որից 2868.71 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունվարին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՐՆԵՐԻ ՄԸ | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող |                |                                      |               |                                |               | Մասնավոր սեփականություն հանդիսացող  |               |                                      |               |                                |               |
|--------------------|---|----------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|
|                    | Գյուղատնտեսական նշանակության հողերի             |                | Բնակավայրերի հողեր                   |               |                                |               | Գյուղատնտեսական նշանակության հողերի |               | Բնակավայրերի հողեր                   |               |                                |               |
|                    |   |                | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |                                     |               | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |
|                    | Միավորների քանակը                               | Մակերեսը /հա/  | Միավորների քանակը                    | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը              | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը                   | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը                    | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը              | Մակերեսը /հա/ |
| Երևան              | 0   | 0.00           | 10                                   | 0.81          | 4                              | 0.65          | 0                                   | 0.00          | 35                                   | 3.58          | 15                             | 2.06          |
| Արագածոտն          | 8   | 51.70          | 0                                    | 0.00          | 1                              | 0.02          | 46                                  | 32.37         | 21                                   | 2.55          | 0                              | 0.00          |
| Արարատ             | 96  | 111.35         | 23                                   | 2.35          | 0                              | 0.00          | 92                                  | 36.48         | 25                                   | 2.07          | 0                              | 0.00          |
| Արմավիր            | 104   | 2767.98        | 1                                    | 0.02          | 0                              | 0.00          | 92                                  | 100.72        | 20                                   | 1.94          | 0                              | 0.00          |
| Գեղարքունիք        | 0   | 0.00           | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 8                                   | 1.69          | 3                                    | 0.29          | 0                              | 0.00          |
| Լոռի               | 0   | 0.00           | 1                                    | 0.50          | 0                              | 0.00          | 17                                  | 5.59          | 5                                    | 0.56          | 2                              | 0.03          |
| Կոտայք             | 10  | 13.60          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 53                                  | 18.00         | 62                                   | 6.44          | 0                              | 0.00          |
| Շիրակ              | 3   | 7.15           | 2                                    | 0.07          | 5                              | 0.05          | 14                                  | 11.41         | 1                                    | 0.80          | 0                              | 0.00          |
| Սյունիք            | 0   | 0.00           | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 14                                  | 20.46         | 3                                    | 0.28          | 0                              | 0.00          |
| Վայոց Ձոր          | 68  | 20.22          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 3                                   | 1.40          | 4                                    | 0.35          | 0                              | 0.00          |
| Տավուշ             | 0   | 0.00           | 1                                    | 0.09          | 3                              | 0.44          | 3                                   | 3.90          | 1                                    | 0.08          | 0                              | 0.00          |
| <b>Ընդամենը</b>    | <b>289</b>                                      | <b>2972.00</b> | <b>38</b>                            | <b>3.84</b>   | <b>13</b>                      | <b>1.16</b>   | <b>342</b>                          | <b>232.02</b> | <b>180</b>                           | <b>18.94</b>  | <b>17</b>                      | <b>2.09</b>   |

2005թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են 881 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ հունվարին՝ 708/ այդ թվում 631-ը՝ գյուղատնտեսական նշանակության /296/, 249-ը՝ բնակավայրերի /397/, 1-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ /15/:

2005թ. հունվարին հողերի առուվաճառքներից 328 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ հունվարին՝ 160/, այդ թվում 9-ը՝ /0.74 հա/ Երևանում /5/, իսկ 319-ը՝ /2959.32 հա/ մյուս մարզերում /155/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 286 միավորը /2955.85 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /2004թ հունվարին՝ 14/, 37-ը՝ /3.77 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /137/, 4-ը՝ /0.03 հա/ հասարակական կառուցապատման /7/ և 1-ը /0.40 հա/ արդյունաբերական օբյեկտների /2/ հողեր:

2005թ. հունվարին հանրապետությունում արձանագրված 631 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 286-ն իրականացվել են աճուրդների և 3-ը՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների |                |   |              |       | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների |                |  |              |       |
|---------------------------------------|--|----------------|---|--------------|-------|--|----------------|--|--------------|-------|
|                                       | Միավորների քանակը  | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |       | Միավորների քանակը  | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |       |
|                                       |  |                | Նվազագույն  | Առավելագույն | Միջին |  |                | Նվազագույն   | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ                       |  |                |   |              |       |  |                |  |              |       |

|                   |    |         |       |        |        |    |       |       |         |        |
|-------------------|----|---------|-------|--------|--------|----|-------|-------|---------|--------|
| Աշտարակ           | 6  | 35.70   | 65.0  | 255.0  | 140.0  | 37 | 10.86 | 800.0 | 10000.0 | 3350.0 |
| Ապարան            |    |         |       |        |        |    |       | 200.0 | 1700.0  | 620.0  |
| Թալին             |    |         |       |        |        | 8  | 18.51 | 200.0 | 1680.0  | 470.0  |
| Ծաղկահովիտ        |    |         |       |        |        | 1  | 3.00  | 170.0 | 2100.0  | 265.0  |
| Արարատի մարզ      |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Արտաշատ           | 77 | 39.63   | 175.0 | 3185.0 | 935.0  | 39 | 10.44 | 740.0 | 12000.0 | 2275.0 |
| Մասիս             | 4  | 30.76   | 55.0  | 2170.0 | 1005.0 | 24 | 12.97 | 400.0 | 8800.0  | 2100.0 |
| Վեդի              | 15 | 40.96   | 155.0 | 1860.0 | 755.0  | 29 | 13.07 | 450.0 | 7200.0  | 1500.0 |
| Արմավիրի մարզ     |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Արմավիր           | 24 | 49.55   | 35.0  | 6410.0 | 1025.0 | 23 | 19.29 | 650.0 | 4650.0  | 1400.0 |
| Բաղրամյան         | 26 | 2667.46 | 40.0  | 975.0  | 365.0  | 32 | 58.27 | 200.0 | 1500.0  | 740.0  |
| Վաղարշապատ        | 54 | 50.97   | 45.0  | 3280.0 | 1090.0 | 37 | 23.16 | 980.0 | 14000.0 | 2200.0 |
| Գեղարքունիքի մարզ |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Գավառ             |    |         |       |        |        |    |       | 420.0 | 1100.0  | 650.0  |
| Ճամբարակ          |    |         |       |        |        | 2  | 0.81  | 100.0 | 500.0   | 220.0  |
| Մարտունի          |    |         |       |        |        | 6  | 0.88  | 100.0 | 4000.0  | 810.0  |
| Սևան              |    |         |       |        |        |    |       | 100.0 | 1000.0  | 385.0  |
| Վարդենիս          |    |         |       |        |        |    |       | 60.0  | 1180.0  | 275.0  |
| Լոռու մարզ        |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Այվերդի           |    |         |       |        |        | 2  | 0.73  | 360.0 | 5500.0  | 920.0  |
| Գուգարք           |    |         |       |        |        | 1  | 0.52  | 500.0 | 6000.0  | 1800.0 |
| Սպիտակ            |    |         |       |        |        |    |       | 500.0 | 3300.0  | 1000.0 |
| Ստեփանավան        |    |         |       |        |        |    |       | 180.0 | 4000.0  | 470.0  |
| Տաշիր             |    |         |       |        |        | 14 | 4.34  | 100.0 | 400.0   | 270.0  |
| Կոտայքի մարզ      |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Աբովյան           |    |         |       |        |        | 36 | 7.46  | 600.0 | 20000.0 | 5280.0 |
| Եղվարդ            | 6  | 6.60    | 355.0 | 1130.0 | 485.0  | 12 | 6.54  | 380.0 | 10000.0 | 3640.0 |
| Հրազդան           | 4  | 7.00    | 270.0 | 275.0  | 273.0  | 5  | 4.00  | 250.0 | 6000.0  | 1100.0 |
| Շիրակի մարզ       |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Ախուրյան          |    |         |       |        |        | 9  | 7.52  | 550.0 | 2500.0  | 730.0  |
| Ամասիա            |    |         |       |        |        |    |       | 80.0  | 525.0   | 170.0  |
| Անի               |    |         |       |        |        | 4  | 2.70  | 240.0 | 800.0   | 325.0  |
| Աշոցք             |    |         |       |        |        |    |       | 60.0  | 210.0   | 160.0  |
| Արթիկ             | 2  | 7.00    | 354.0 | 356.0  | 355.0  | 1  | 1.19  | 140.0 | 800.0   | 290.0  |
| Սյունիքի մարզ     |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Գորիս             |    |         |       |        |        |    |       | 200.0 | 1600.0  | 540.0  |
| Կապան             |    |         |       |        |        | 5  | 2.80  | 120.0 | 2000.0  | 420.0  |
| Մեղրի             |    |         |       |        |        |    |       | 400.0 | 4240.0  | 850.0  |
| Սիսիան            |    |         |       |        |        | 9  | 17.66 | 90.0  | 1500.0  | 310.0  |
| Վայոց Ձորի մարզ   |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Եղեգնաձոր         | 68 | 20.22   | 135.0 | 735.0  | 650.0  | 3  | 1.40  | 260.0 | 4000.0  | 2450.0 |
| Վայք              |    |         |       |        |        |    |       | 120.0 | 3400.0  | 950.0  |
| Տավուշի մարզ      |    |         |       |        |        |    |       |       |         |        |
| Բերդ              |    |         |       |        |        |    |       | 100.0 | 2000.0  | 660.0  |
| Իջևան             |    |         |       |        |        |    |       | 530.0 | 4000.0  | 1500.0 |
| Նոյեմբերյան       |    |         |       |        |        | 3  | 3.90  | 100.0 | 8340.0  | 750.0  |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հունվարին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 173 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 28-ը՝ աճուրդային վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով.

| Տարածաշրջանի<br>(նախկին շրջան)<br>անվանումը | Պետական և համայնքային սեփականություն<br>հանդիսացող բնակելի կառուցապատման<br>/տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների |               |   |              |        | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի<br>կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների |               |   |              |        |
|---|--|---------------|---|--------------|--------|---|---------------|---|--------------|--------|
|   | Միավորների քանակը  | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված<br>պայմանագրային գները 1000.0<br>քմ մակերեսի հաշվարկով<br>/ԱՄՆ դոլար/ |              |        | Միավորների քանակը   | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված<br>շուկայական գները 1000.0քմ<br>մակերեսի հաշվարկով<br>/ԱՄՆ դոլար/ |              |        |
|   |  |               | Նվազագույն  | Առավելագույն | Միջին  |   |               | Նվազագույն  | Առավելագույն | Միջին  |
| <b>Արագածոտնի մարզ</b>                      |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Աշտարակ                                     |  |               |   |              |        | 20  | 20455.0       | 250.0   | 8000.0       | 3550.0 |
| Ապարան                                      |  |               |   |              |        |   |               | 250.0   | 1400.0       | 340.0  |
| Թալին                                       |  |               |   |              |        | 1   | 5030.0        | 100.0   | 800.0        | 140.0  |
| Ծաղկահովիտ                                  |  |               |   |              |        |   |               | 100.0   | 800.0        | 140.0  |
| <b>Արարատի մարզ</b>                         |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Արտաշատ                                     | 12   | 12230.0       | 325.0   | 570.0        | 410.0  | 4   | 4220.0        | 300.0   | 6000.0       | 1210.0 |
| Մասիս                                       |  |               |   |              |        | 17  | 12550.0       | 300.0   | 20000.0      | 1450.0 |
| Վեդի  | 11   | 11270.0       | 100.0   | 525.0        | 345.0  | 4   | 3906.0        | 250.0   | 2200.0       | 890.0  |
| <b>Արմավիրի մարզ</b>                        |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Արմավիր                                     |  |               |   |              |        | 3   | 2900.0        | 300.0   | 5000.0       | 1310.0 |
| Բաղրամյան                                   |  |               |   |              |        | 1   | 1200.0        | 180.0   | 600.0        | 230.0  |
| Վաղարշապատ                                  | 1  | 249.0         | 2090.0  | 2090.0       | 2090.0 | 16  | 15300.0       | 300.0   | 10000.0      | 2000.0 |
| <b>Գեղարքունիքի մարզ</b>                    |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Գավառ                                       |  |               |   |              |        | 1   | 1280.0        | 300.0   | 2000.0       | 610.0  |
| Ճամբարակ                                    |  |               |   |              |        |   |               | 100.0   | 300.0        | 160.0  |
| Մարտունի                                    |  |               |   |              |        | 1   | 1200.0        | 200.0   | 600.0        | 260.0  |
| Սևան  |  |               |   |              |        |   |               | 200.0   | 2000.0       | 260.0  |
| Վարդենիս                                    |  |               |   |              |        | 1   | 420.0         | 100.0   | 300.0        | 120.0  |
| <b>Լոռու մարզ</b>                           |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Ալավերդի                                    |  |               |   |              |        | 1   | 950.0         | 150.0   | 600.0        | 210.0  |
| Գուգարք                                     |  |               |   |              |        | 4   | 4671.0        | 150.0   | 5200.0       | 860.0  |
| Սպիտակ                                      |  |               |   |              |        |   |               | 140.0   | 900.0        | 190.0  |
| Ստեփանավան                                  | 1  | 5000.0        | 80.0  | 80.0         | 80.0   |   |               | 100.0   | 600.0        | 160.0  |
| Տաշիր                                       |  |               |   |              |        |   |               | 100.0   | 300.0        | 135.0  |
| <b>Կոտայքի մարզ</b>                         |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Աբովյան                                     |  |               |   |              |        | 13  | 9678.0        | 300.0   | 10000.0      | 2420.0 |
| Եղվարդ                                      |  |               |   |              |        | 46  | 52120.0       | 300.0   | 10000.0      | 2700.0 |
| Հրազդան                                     |  |               |   |              |        | 3   | 2611.0        | 300.0   | 8000.0       | 1740.0 |
| <b>Շիրակի մարզ</b>                          |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Ախուրյան                                    | 2  | 716.5         | 1030.0  | 1425.0       | 1225.0 | 1   | 8000.0        | 250.0   | 3400.0       | 450.0  |
| Ամասիա                                      |  |               |   |              |        |   |               | 100.0   | 300.0        | 135.0  |
| Անի   |  |               |   |              |        |   |               | 150.0   | 400.0        | 185.0  |
| Աշոցք                                       |  |               |   |              |        |   |               | 90.0  | 300.0        | 120.0  |
| Արթիկ                                       |  |               |   |              |        |   |               | 150.0   | 900.0        | 220.0  |
| <b>Սյունիքի մարզ</b>                        |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Գորիս                                       |  |               |   |              |        |   |               | 150.0   | 1200.0       | 400.0  |
| Կապան                                       |  |               |   |              |        | 1   | 361.0         | 150.0   | 1400.0       | 410.0  |
| Մեղրի                                       |  |               |   |              |        |   |               | 150.0   | 900.0        | 230.0  |
| Սիսիան                                      |  |               |   |              |        | 2   | 2442.0        | 150.0   | 900.0        | 260.0  |
| <b>Վայոց ձորի մարզ</b>                      |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Եղեգնաձոր                                   |  |               |   |              |        | 4   | 3540.0        | 150.0   | 2200.0       | 380.0  |
| Վայք  |  |               |   |              |        |   |               | 170.0   | 1400.0       | 225.0  |
| <b>Տավուշի մարզ</b>                         |  |               |   |              |        |   |               |   |              |        |
| Բերդ  |  |               |   |              |        |   |               | 100.0   | 1400.0       | 170.0  |
| Իջևան                                       | 1  | 859.0         | 200.0   | 200.0        | 200.0  | 1   | 800.0         | 150.0   | 2200.0       | 640.0  |
| Նոյեմբերյան                                 |  |               |   |              |        |   |               | 100.0   | 1400.0       | 210.0  |



2005թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ 0.77 հա մակերեսով՝ Արարատի մարզում:

2005թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 704 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 26.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 24.8%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ աճել՝ 8.3%-ով:

2005թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 44 բնակարանների, 7 անհատական բնակելի տների, 177 հասարակական, 10 արտադրական նշանակության օբյեկտների, 463 միավոր հողերի և 3 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2005թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 38 վարձակալության գործարքների քանակները 2004թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ, իսկ 2004թ. հունվարի համեմատ աճել՝ 40.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվարին հանրապետությունում վարձակալվել են 1353.52 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 1.86 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1312.48 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 12.15 հա բնակավայրերի, 10.22 հա արդյունաբերական օբյեկտների, 7.84 հա հատուկ պահպանվող տարածքների, 5.27 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 3.26 հա ջրային և 0.44 հա էներգետիկայի հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Շիրակի մարզում՝ 578.55 հա, որից 578.47 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. հունվարին համայնքների վարչական սահմաններից դուրս հողեր չեն վարձակալվել:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

| <i>Մարզի անվանումը</i> | <i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.ևշ հողերի</i> |  | <i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.ևշ հողերի</i> |  |
|------------------------|--|--|---|--|
|                        | <i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>                           | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> | <i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>                            | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> |
| Արագածոտն              | 0  | 0.00                                       | 66  | 396.34                                     |
| Արարատ                 | 0  | 0.00                                       | 21  | 30.88                                      |
| Արմավիր                | 0  | 0.00                                       | 4   | 68.92                                      |
| Գեղարքունիք            | 0  | 0.00                                       | 7   | 6.02                                       |
| Լոռի                   | 0  | 0.00                                       | 17  | 61.08                                      |
| Կոտայք                 | 0  | 0.00                                       | 52  | 67.92                                      |
| Շիրակ                  | 0  | 0.00                                       | 62  | 578.46                                     |
| Սյունիք                | 0  | 0.00                                       | 13  | 80.47                                      |
| Վայոց Ձոր              | 0  | 0.00                                       | 13  | 12.75                                      |
| Տավուշ                 | 0  | 0.00                                       | 11  | 9.64                                       |
| <b>Ընդամենը</b>        | <b>0</b>   | <b>0.00</b>                                | <b>266</b>  | <b>1312.5</b>                              |

2005թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 297 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցումների քանակի 4.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 65.3%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 1.3%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 44.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /24.6%/, առանձնատների /12.8%/ և հողերի /8.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 175 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 53.7%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ աճել՝ 16.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 24.49 հա /այդ թվում 3.93 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 20.13 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Սյունիքի մարզում՝ 16.15 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 14 և 9 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2004թ. դեկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է՝ 43.8%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 9.5%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարատի մարզում՝ 34,8%:

2005թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1041 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 27.5%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ աճել՝ 3.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17,1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /42.5%/:

***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***